



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին
ատյանի (վարչական) դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ 0213/05/2009թ.
Նախագահող դատավոր՝ Ա.Աբրահամյան

վարչական գործ թիվ 0213/05/2009թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«20» մայիս 2010թ.

ք.Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով՝

նախագահությամբ՝ դատավոր
դատավորներ՝

Գ.Գրիգորյանի
Գ. Հարությունյանի
Ի.Կարապետյանի

դռնբաց դատական նիստում քննելով Է.Պողոսյանի վճռաբեկ բողոքը ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի (վարչական) դատարանի (այսուհետ՝ Վարչական դատարան) 2010թ. փետրվարի 26-ի վճռի դեմ՝ ըստ Էվալդիկ Սեդրակի Պողոսյանի հայցի ընդդեմ Մարտակերտի շրջվարչակազմի և Վլադիկ Սարգսյանի՝ «վարչակազմի ղեկավարի որոշումն ու դրա հիման վրա կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին»,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է անվավեր ճանաչել Մարտակերտի շրջվարչակազմի ղեկավարի 10.11.2009թ. թիվ 108 որոշումը և դրա հիման վրա 11.11.2009թ. կնքված վերաբնակեցված ընտանիքին անհատական տուն-բնակարան տալու մասին պայմանագիրը:

ԼՂՀ Վարչական դատարանը 26.02.2010թ. հայցը բավարարել է մասնակիորեն: Դատարանը վճռել է՝ անվավեր ճանաչել Մարտակերտի շրջվարչակազմի ղեկավարի և Վլադիկ Արմենակի Սարգսյանի միջև 2009թ. նոյեմբերի 11-ին կնքված վերաբնակեցված ընտանիքին անհատական տուն-բնակարան տալու մասին պայմանագիրը՝ որպես առոչինջ, իսկ Մարտակերտի շրջվարչակազմի ղեկավարի 2009թ. նոյեմբերի 10-ի թիվ 108 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասով հայցը մերժել՝ որպես անհիման:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել հայցվորը:

Վճռաբեկ բողոքը վերադարձվել է հայցվորին՝ այն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 244-րդ և 247-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանեցնելու և կրկին ներկայացնելու համար:

Բողոքը կրկին ներկայացվել է դատարան:

Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել պատասխանող Վ.Սարգսյանի ներկայացուցիչ Ա.Ապրեայանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը:

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճիռը կայացվել է նյութական իրավունքի նորմերի խախտումներով:

Դատարանը չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Վճռում նշված է, որ համայնքի ղեկավար Ռոմա Կարապետյանը իբր ցուցմունք է տվել, որ հայցվորի վրա տուն և տնամերձ հողամաս չի գրանցված: Սակայն նմանատիպ ցուցմունք համայնքի ղեկավարը չի տվել, այլ նշել է, որ համայնքի աշխատակազմում առկա գրքերում հայցվորի անվամբ գրանցված են տունը և տնամերձ հողամասը, իսկ եթե կատարված գրանցումը թերի է, ապա դա հայցվորի մեղքը չէ:

Դատարանը հետազոտելով տնտեսական գիրքը՝ ճիշտ գնահատական չի տվել նշված ապացույցներին:

Դատարանը հաստատված է համարում, որ վիճելի տունը պետական սեփականություն է և գտնվում է վարչակազմի հաշվեկշռում: Սակայն, դատարանը գնահատական չի տվել այն փաստին, որ տան նկատմամբ պետության սեփականության իրավունքը գրանցված չէ և վարչակազմի ղեկավարը իրավասու չէր կատարել հատկացում մինչև իրավունքի գրանցումը: Գործի նյութերով ապացուցված չէ, որ տունը գտնվում է վարչակազմի հաշվեկշռում: Դրանով իսկ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 173-րդ հոդվածը:

Դատարանը գնահատական չի տվել նաև այն փաստին, որ տունը հատկացնելիս այն զբաղեցրված էր իրենց կողմից, այսինքն ազատ չէր: Այսպիսով, դատարանը չի գնահատել ներկայացրած բոլոր գրավոր ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ: Նշված արդյունքներով դատարանը չի կիրառել «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը:

Վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բավարարել բողոքը համապատասխանաբար մասնակի բեկանել և փոփոխել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի թիվ 0123/05/2009թ. քաղաքացիական գործով 2010թ. փետրվարի 26-ին կայացրած վճիռը և բավարարել հայցը՝ ամբողջությամբ:

2.1 վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.

Վճռաբեկ բողոքին պատասխան ներկայացրած անձը գտնում է, որ վճռաբեկ բողոքն անհիմն է, քանի որ դատաքննությամբ հիմնավորվել է, որ հայցվոր Էվալդիկ Պողոսյանը Նոր Մարաղա գյուղում չի մասնակցել գյուղի հողերի սեփականաշնորհմանը և չունի սեփական հող: Բնականաբար վիճելի տունը կառուցված չէ հայցվորի սեփական հողամասում:

Հայցվորը՝ Նոր Մարաղա գյուղից հիվանդության պատճառով, ժամանակավոր Շուշի քաղաք տեղափոխվելու մասին որևէ ապացույց չի ներկայացրել: Նա շուրջ 5 տարի ամբողջ ընտանիքով՝ կնոջ և որդու հետ մշտապես բնակվել է Շուշի քաղաքում, որտեղ և համատեղ

սեփականության իրավունքով ստացել է Շուշի քաղաքի Մուրացանի փողոցի թիվ 2 շենքի թիվ 16 բնակարանը:

Վլադիկ Մարգարյանին անհատական տուն-բնակարան տալու մասին պայմանագիրը նոտարական վավերացում և պետական գրանցում չի ստացել, քանի որ Նոր Մարաղա գյուղի ինչպես բոլոր տների, այնպես էլ վիճելի տան նկատմամբ պետության՝ ի դեմս ԼՂՀ Մարտակերտի շրջվարչակազմի սեփականության իրավունքի գրանցման գործընթացը հայցի քննության ժամանակ գտնվում էր ընթացքի մեջ: 11.03.2010թ. վիճելի տունը որպես պետության սեփականություն գրանցվել է ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի Մարտակերտի տարածքային ստորաբաժանման գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 1-3 մատյանի 156655 համարի տակ ու տրվել է թիվ 107350 սեփականության իրավունքի վկայականը: 29.03.2010թ. Մարտակերտի շրջվարչակազմի և իր վստահորդ Վլադիկ Մարգարյանի միջև կնքվել է վերաբնակեցված ընտանիքի անհատական տուն-բնակարան տալու մասին պայմանագիրը, պատասխանող անձը խնդրել է վճարել բողոքը վարույթ չընդունել:

3.Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1/ Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա գյուղն ընդգրկված է ԼՂՀ կառավարության կողմից հաստատված վերաբնակեցվող գյուղերի ցանկում: Գյուղի տները կառուցվել և վերակառուցվել են պետական հողերում, պետական միջոցներով, համարվում են պետական սեփականություն և գտնվում են շրջվարչակազմի հաշվեկշռում:

2/ Ըստ Նոր Մարաղա գյուղի համայնքի տնտեսական գրքի անձնական թիվ 27 հաշվի Էվալդիկ Պողոսյանի անվամբ տնամերձ հողամաս չի գրանցված:

3/ Նոր Մարաղա գյուղի տարածքից Էվալդիկ Պողոսյանին տնամերձ հողամաս հատկացնելու մասին որոշում չի ընդունվել:

4/ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարտակերտի տարածքային ստորաբաժանումում Էվալդիկ Պողոսյանի անվամբ սեփականության իրավունքով անշարժ գույք չի գրանցված:

5/ Մարտակերտի շրջվարչակազմի ղեկավարի 2009 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 108 որոշմամբ Նոր Մարաղա գյուղի բնակիչ, վերաբնակիչ (փախստականի վկայական թիվ 2202, վերաբնակեցման գրքույկ թիվ 750) Վլադիկ Մարգարյանի ընտանիքին հատկացվել է Նոր Մարաղա գյուղում պետական միջոցներով վերակառուցված, նրա կողմից 2005թ. զբաղեցրած երկու սենյականոց բնակարանը՝ 0,20 հա տնամերձ հողամասով:

6/ 1996 թվականի հուլիսի 1-ին Էվալդիկ Պողոսյանը հաշվառվել է (գրանցվել է) Շուշի քաղաքում:

1998 թվականի դեկտեմբերի 15-ին Շուշիի շրջվարչակազմը Էվալդիկ Պողոսյանին, նրա կնոջը ու որդուն՝ Սվետլանա և Ռոբերտ Պողոսյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով հատկացրել է Շուշի քաղաքի Մուրացանի փողոցի թիվ 2 շենքի թիվ 16՝ երեք սենյականոց բնակարանը:

7/ Պետությունը վերաբնակիչներին ԼՂՀ տարածքում արտոնյալ կարգով մեկ անգամ է բնակարան հատկացնում:

8/ 2008 թվականի հուլիսի 1-ին Էվալդիկ Պողոսյանը դուրս է գրվել Շուշի քաղաքի հաշվառումից և 2008 թվականի հուլիսի 16-ին հաշվառվել Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա գյուղում:

4.ԼՂՀ Գերագույն դատարանի (այսուհետ՝ Գերագույն դատարան) պատճառաբանությունները և եզրահանգումները.

Գերագույն դատարանն արձանագրում է, որ հայցվորը վճարել բողոք է բերել վարչական գործով:

Ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման և դրանց ազատ գնահատման մասին դրույթները ամրագրված են ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածում, այլ ոչ թե ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածում, ինչպես իր բողոքում նշել է հայցվորը:

Հայցվորի ներկայացուցիչը դատարանում հասակեցնելով բողոքի հիմնավորումները հայտնել է, որ Վարչական դատարանը վճիռ է կայացրել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով:

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ՝

Բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ ԼՂՀ անրապետությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը պետական սեփականություն է: Քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին չպատկանող հողը և բնական այլ պաշարները պետական սեփականություն են:

Գործի նյութերից հաստատված է, որ Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա համայնքն ընդգրկված է ԼՂՀ կառավարության կողմից հաստատված վերաբնակեցվող գյուղերի ցանկում: Վիճելի բնակելի տունը պետական սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա 1997 թվականին վերակառուցվել է պետական միջոցներով, գրանցվել որպես պետական սեփականություն, հաշվառվել ու ներկայումս հաշվառված է Մարտակերտի շրջվարչակազմի հաշվեկշռում:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները:

Սույն գործով պարզված է, որ հայցվորը որևէ ապացույց չի ներկայացրել դատարանին այն մասին, որ պետության սեփականության իրավունքը դադարել է վիճելի տան և 2000 քառակուսի մետր մակերեսով տնամերձի նկատմամբ:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վիճելի տունը և տնամերձ հողամասը Մարտակերտի շրջվարչակազմը հատկացրել է Ադրբեջանից բռնագաղթված և ԼՂՀ քաղաքացիություն ստացած, վերաբնակիչ Սարգսյանների ընտանիքին:

«1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ բռնագաղթված և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց բնակարաններ հատկացնելու կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

Ըստ ԼՂՀ կառավարության 15.04.2003 թվականի թիվ 121՝ ԼՂՀ տարածքում վերաբնակվող ընտանիքներին տրամադրվող արտոնությունների մասին որոշման 5-րդ կետի /բ/ ենթակետի՝ ԼՂՀ վարչակազմերը պարտավորեցվում են՝ կառուցված և վարչակազմի հաշվեկշռի մեջ ընդունված անհատական տները սահմանված կարգով տրամադրել վերաբնակեցման գրքույկ ստացած ընտանիքներին՝ համաձայն նախօրոք կնքված անհատական տուն կամ բնակարան տրամադրելու մասին պայմանագրի:

Վիճելի անհատական տունը գրանցված է Մարտակերտի շրջվարչակազմի հաշվեկշռում:

Նման հանգամանքներում՝ հողի հարկերը հայցվորի կողմից մուծելու փաստը հիմք չի կարող հանդիսանալ Էվալդիկ Պողոսյանի սեփականության իրավունքը վիճելի գույքի

նկատմամբ ճանաչելու, Մարտակերտի շրջվարչակազմի ղեկավարի 10.11.2009 թվականի թիվ 108 որոշումն անվավեր ճանաչելու համար: Անհիմն է վճռաբեկ բողոքի պատճառաբանությունը, որ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 173-րդ հոդվածը:

Սույն գործով հաստատված փաստերի հիման վրա Գերագույն դատարանը չի անդրադառնում բողոքի այն մասին, ըստ որի ստորադաս դատարանը գնահատական չի տվել՝ հայցվորի վիճելի տանը ապրելու հանգամանքին, քանի որ այդ հանգամանքը որևէ էական նշանակություն չունի սույն վեճի լուծման տեսանկյունից:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ Մարտակերտի շրջվարչակազմի թիվ 108 որոշումը չի հակասում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին, կառավարության որոշումներին, ...այլ բխում է դրանցից, հետևապես հիմքեր չկան «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառելու համար:

Վերը շարադրված պատճառաբանությունների հիման վրա՝ Գերագույն դատարանը սույն գործով ներկայացված բողոքն անհիմն է համարում, հետևաբար՝ մերժման ենթակա:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածով սահմանված Գերագույն դատարանի լիազորություններից է վճռաբեկ բողոքի մերժումը և դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Էվալդիկ Պողոսյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. փետրվարի 26-ի վճիռը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

**Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**